ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2016 թվականի թիվ 160 -Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2016 թվականի նոյեմբերի 28-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գագիկ Շավարշի Մխիթարյանի հետ 2011 թվականի նոյեմբերի 28-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը 2016 թվականի նոյեմբերի 28-ից Գագիկ Շավարշի Մխիթարյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2016թ.նոյեմբերի 24
ք.Իջևան